


ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ռադիոլսարանի
հեատագոտություն
Հայաստանի
Հանրապետությունում



Երևան, 2019թ.

Անցկացնել ոստիոլսարանի հետազոտություն ՀՀ -ում երկու առանձնացված թիրախային խմբերի շրջանում

Պատվիրատու «Հայաստանի հանրային ոստիորնկերություն» ՓԲԸ

Կատարող «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ

*Աշխատանքները ֆինանսավորվում են «Հայաստանի հանրային
ոստիորնկերություն» ՓԲԸ-ի և «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի միջև 2019թ. հուլիսի
16-ին կնքված թիվ ՀՀՌ-ԳՀՄՁԲ19/05 պայմանագրի շրջանակներում:*

Ներածություն

Սույն հաշվետվությունում ներկայացված են «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի և «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի միջև 2019թ. հուլիսի 16-ին կնքված թիվ ՀՀՌ-ԳՀԾՁԲ 19/05 պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքները: Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (այսուհետ՝ ՏԲ) համաձայն աշխատանքի հիմնական նպատակն է իրականացնել սցենարային հարցումներ: Մասնավորապես.

1. Անցկացնել ռադիոլսարանի հետազոտություն ՀՀ-ում երկու առանձնացված թիրախային խմբերի շրջանում
 - > Երևանի չափահաս բնակիչներ,
 - > Մարզերի չափահաս բնակիչներ /բացառությամբ Արմավիրի, Արարատի, Կոտայքի և Արագածոտնի մարզերի/:
1. Հարցվողների ընտրանքը պետք է համապատասխանի ՀՀ բնակչության սցիալ-ժողովրդագրական պատկերին:
2. Երկու թիրախային խմբերի համար էլ հարցվողների թիվը պետք է լինի շուրջ 1000:
3. Որակի ստուգումը առնվազն 40%:
4. Հարցման տևողությունը առնվազն 50ր:

Հարցումը պետք է պարզի

- > ռադիոլսողների ընդհանուր թիվը,
- > իրական փաստացի լսարանի ծավալը /վարկանիշ/,
- > հանրային ռադիոյի լսարանի սցիալ-ժողովրդագրական պատկերը /սեռատարիքային նկարագիր, կրթական մակարդակ, զբաղվածության բնույթ/,
- > հանրային ռադիոյի ունկնդրման առանձնահատկությունները/ ազդակի ստացման տեխնիկական եղանակը FM, AM, համացանց, մուլտիպլեքս, արբանյակ - տոկոսային հարաբերությամբ/,
- > հանրային ռադիոյի ունկնդրման վայրը աշխատատեղ, մեքենա, բնակարան, այլ - տոկոսային հարաբերությամբ,
- > հանրային ռադիոյի հաղորդումների ունկնդրման ինտենսիվությունը ամեն օր, օրը մեջ, շաբաթական մեկ կամ երկու անգամ, օրական մեկ անգամ, օրական երեք կամ չորս անգամ, ավելի քան օրական 4 անգամ,
- > հանրային ռադիոյի հաղորդումների ունկնդրման սեանսի տևողությունը մինչև 20ր, 20- 40ր, 40-60ր, 60+,
- > հանրային ռադիոյի ամենաբարձր վարկանիշով հաղորդումները /n ր հաղորդումն էք լսում, թվարկել/,
- > հանրային ռադիոյի ամենաճանաչելի հեղինակը, հաղորդավարը, լրագրողը,

> Հանրային ռադիոյի ամենաբարձր բացասական վարկանիշով հաղորդումը /որ հաղորդումն է ամենավատը/,

> Ի նչ բնույթի նոր հաղորդումներ է ակնկալում լսարանը Հանրային ռադիոյից:

հետազոտության շահառուներն են ՀՀ չափահաս քաղաքացիները:

հաշվետվությունը ներկայացվում է և թղթային, և էլետրոնային (սեղմասկավառակով) տարբերակներով:

Պատվիրատուն ՏԲ-ի իրականացման համար Կատարողին տրամադրել է

1. հանրային ռադիոյի հաղորդումների ծրագիրը:
2. հանրային ռադիոյի հաղորդումների անվանումները:
3. հանրային ռադիոյի հաղորդումների համառոտ նկարագրությունները:
4. հանրային ռադիոյի հաղորդավարների անունները:

ՏԲ-ով նախատեսված տվյալների հավաքագրման համար մշակվել և Պատվիրատուի հետ համաձայնեցվել են հետազոտության մեթոդաբանությունը և գործիքները (հարցաշարերը): Քանակական ցուցանիշների հավաքագրման նպատակով ձևավորվել է տվյալների բազա, որտեղ մուտքագրվել է հավաքագրված տեղեկատվությունը:

1. Ռադիոլսարանի հետազոտության իրականացման ժամանակ կիրառվող մեթոդ և դրա ընթացքում օգտագործվող գործիքների նկարագրություն

հետազոտությունն իրականացվել է հարցման մեթոդով Պատվիրատուի հետ համաձայնեցված համապատասխան գործիքով (տես հավելված):

հարցաթերթիկը լրացվել է հարցազրուցավարի և հարցվողի գրույցի արդյունքում: հարցազրույցների ընթացքում հարցազրուցավարն ընթերցել է հարցաշարում առկա հարցերը և գրանցել է հարցվողի կողմից հնչած պատասխանները:

1.1. հետազոտության իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման ընթացակարգ

Ուսումնասիրություններն իրականացվել են հետևյալ փուլերով

1. Նախապատրաստական փուլ: Այս փուլում հետազոտողը/ներին խումբը ծանոթացել է ուսումնասիրվող խնդրին, մշակել է հետազոտության ծրագիրը, որում հստակեցվել են հետազոտության նպատակը, խնդիրները, օբյեկտն ու առարկան և մեթոդաբանական այլ հարցեր: Կազմվել է աշխատանքային պլանը: Մշակվել է հետազոտության գործիքը (հարցաթերթ և այլն), փորձարկվել է, որի արդյունքում այն վերջնականացվել է: Հարցազրուցավարների, մուտքագրողների, դաշտային աշխատանքը համակարգողների համար դասընթաց է կազմակերպվել:

2. Դաշտային աշխատանքների փուլ: Այս փուլի նախնական շրջանում պատրաստվել են դաշտային աշխատանքների համար անհրաժեշտ տեխնիկական միջոցները (հարցաթերթերի բազմացում և այլն): Այնուհետև բուն տեղեկատվության հավաքման գործընթացն է, որն իրականացվել է միժամանակյա վերահսկողությամբ: Վերահսկվել է հարցազրույցների վարման ընթացքը, նախնական ընտրանքի պահպանումը և հարցաթերթերի լրացման գործընթացը:

3. Ամփոփիչ փուլ: Այս փուլում ստացված տեղեկատվությունն անցնում է մշակում: Հարցաթերթը ստուգվել են, դրանցում առկա բաց հարցերը կոդավորվել: Այնուհետև ստացված տեղեկատվությունը մուտքագրվել և թվայնացվել: Էլեկտրոնային տեղեկատվությունը մեկ անգամ ևս ստուգվել է, որից հետո սկսվել է վերլուծության և հաշվետվության կազմման փուլը: Քանակական տվյալները հիմնականում վերլուծվել են վիճակագրական եղանակներով:

1.2. հետազոտությունների ընտրանքներ

Համաձայն «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի (այսուհետ Պատվիրատու) և «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի (այսուհետ Կատարող) միջև կնքված պայմանագրի, Կատարողը պետք է հետազոտությունն իրականացնի պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների համաձայն:

Աղյուսակ 1. հետազոտության մարզային ընտրանք

Նախատեսված մարզեր	Քաղաքային (%)								Գյուղական (%)								Ընդհանուր
	18-37		38-58		59-79		80 և բարձր		18-37		38-58		59-79		80 և բարձր		
	Տղ.	Կին	Տղ.	Կին	Տղ.	Կին	Տղ.	Կին	Տղ.	Կին	Տղ.	Կին	Տղ.	Կին	Տղ.	Կին	
Գեղարքունիք	9,713	10,092	7,925	9,595	4,921	6,823	569	944	27,924	27,284	21,502	21,281	8,917	10,799	1,519	2,581	172,389
Լոռի	17,032	19,137	13,703	19,320	9,207	14,801	1,081	2,340	13,002	13,509	9,529	12,222	5,363	8,128	1,201	2,402	161,977
Շիրակ	19,545	21,430	15,261	20,153	9,664	15,599	989	2,252	15,137	16,352	11,267	13,341	5,335	7,120	769	1,657	175,871
Սյունիք	13,964	13,957	12,489	13,570	7,587	9,831	1,067	1,604	6,927	7,026	5,741	5,864	2,871	3,644	755	1,214	108,111
Վայոց ձոր	2,446	2,690	1,873	2,492	1,364	1,946	172	246	5,143	5,132	3,738	4,322	2,080	2,615	590	948	37,797
Տավուշ	7,055	7,767	6,306	7,649	3,826	5,573	628	1,167	10,490	10,389	8,579	9,482	4,771	6,557	1,292	2,266	93,797
Ընդամենը																	749,942
Նախատեսված մարզեր	Քաղաքային (%)								Գյուղական (%)								Ընդհանուր
	18-37		38-58		59-79		80 և բարձր		18-37		38-58		59-79		80 և բարձր		
	Տղ.	Կին	Տղ.	Կին	Տղ.	Կին	Տղ.	Կին	Տղ.	Կին	Տղ.	Կին	Տղ.	Կին	Տղ.	Կին	
Գեղարքունիք	1,30%	1,35%	1,06%	1,28%	0,66%	0,91%	0,08%	0,13%	3,72%	3,64%	2,87%	2,84%	1,19%	1,44%	0,20%	0,34%	22,99%
Լոռի	2,27%	2,55%	1,83%	2,58%	1,23%	1,97%	0,14%	0,31%	1,73%	1,80%	1,27%	1,63%	0,72%	1,08%	0,16%	0,32%	21,60%
Շիրակ	2,61%	2,86%	2,03%	2,69%	1,29%	2,08%	0,13%	0,30%	2,02%	2,18%	1,50%	1,78%	0,71%	0,95%	0,10%	0,22%	23,45%
Սյունիք	1,86%	1,86%	1,67%	1,81%	1,01%	1,31%	0,14%	0,21%	0,92%	0,94%	0,77%	0,78%	0,38%	0,49%	0,10%	0,16%	14,42%
Վայոց ձոր	0,33%	0,36%	0,25%	0,33%	0,18%	0,26%	0,02%	0,03%	0,69%	0,68%	0,50%	0,58%	0,28%	0,35%	0,08%	0,13%	5,04%
Տավուշ	0,94%	1,04%	0,84%	1,02%	0,51%	0,74%	0,08%	0,16%	1,40%	1,39%	1,14%	1,26%	0,64%	0,87%	0,17%	0,30%	12,51%
Ընդամենը																	100%
Նախատեսված մարզեր	Քաղաքային								Գյուղական								Ընդհանուր
	18-37		38-58		59-79		80 և բարձր		18-37		38-58		59-79		80 և բարձր		
	Տղ.	Կին	Տղ.	Կին	Տղ.	Կին	Տղ.	Կին	Տղ.	Կին	Տղ.	Կին	Տղ.	Կին	Տղ.	Կին	
Գեղարքունիք	13	13	11	13	7	9	1	1	37	36	29	28	12	14	2	3	229
Լոռի	23	26	18	26	12	20	1	3	17	18	13	16	7	11	2	3	216
Շիրակ	26	29	20	27	13	21	1	3	20	22	15	18	7	9	1	2	234
Սյունիք	19	19	17	18	10	13	1	2	9	9	8	8	4	5	1	2	145
Վայոց ձոր	3	4	3	3	2	3	0	0	7	7	5	6	3	4	1	1	52
Տավուշ	9	10	8	10	5	7	1	2	14	14	11	13	6	9	2	3	124
Ընդամենը																	1,000

Աղյուսակ 2. հետազոտության երևանյան ընտրանք

	18-37		38-58		59-79		80 և բարձր		Ընդհանուր
	Տղ.	Կին	Տղ.	Կին	Տղ.	Կին	Տղ.	Կին	
Երևան	148,900	167,429	127,035	160,334	81,577	116,558	14,147	22,381	838,361
Երևան (%)	17,76%	19,97%	15,15%	19,12%	9,73%	13,90%	1,69%	2,67%	100,00%
Երևան	178	200	151	191	97	139	17	27	1,000

Այդ նպատակով Կատարողը ձևավորել է հետազոտության ընտրանքներ հիմք ընդունելով Պատվիրատուի կողմից սահմանված թիրախային խմբերի թվաքանակը և համապատասխան մարզի/քաղաքի բնակչության թվաքանակը¹:

Մասնավորապես ռադիոլսարանի հետազոտությունն իրականացվելու է ՀՀ-ում երկու առանձնացված թիրախային խմբերի շրջանում.

1. Երևանի չափահաս 1,000 բնակիչների շրջանում:
2. Մարզերի չափահաս 1,000 բնակիչների /բացառությամբ Արմավիրի, Արարատի, Կոտայքի և Արագածոտնի մարզերի/ շրջանում:

Երևան քաղաքի և մարզերի ներկայացուցչական ընտրանքները կազմվել են ստրատիֆիկացման մեթոդով (տես Աղյուսակ 1, Աղյուսակ 2): Բնակչությունը գլխավոր համակցությունը, նախ բաշխվել է ըստ մարզերի (ՏԲ-ով ներառված մարզեր) և Երևան քաղաքի, ապա նաև ըստ սեռի, տարիքային խմբի: Մարզերի դեպքում գլխավոր համակցությունը բաշխվել է նաև ըստ բնակավայրի տիպի գյուղական և քաղաքային: Հաշվարկվել է վերջիններիս համամասնությունը (տոկոսային արտահայտությամբ)¹ գլխավոր համակցության մեջ: Այնուհետև այդ համամասնություններն էլ կիրառվել են յուրաքանչյուր մարզի և Երևան քաղաքի ներկայացուցչական ընտրանքները ստանալու համար:

¹ ՀՀ ազգային վիճակագրության կոմիտեի տվյալներ (<https://www.armstat.am/am/?nid=209>):

2. Կատարված հարցումների վերլուծություն


2.1. Երևան քաղաքի չափահաս բնակիչների շրջանում իրականացված սոցիոլոգիական հարցման վերլուծություն

Ներկայացնենք հարցվողների սեռատարիքային բաշխվածությունը: Բոլոր հարցվողները եղել են Երևանի բնակիչներ:

Այսպես, Գծապատկեր 1-ից տեսնում ենք, որ հարցվողների մեծամասնությունը 55.70%-ը կամ 557 անձ, եղել են *կանայք*, իսկ *տղամարդիկ* 44.30%-ը կամ 443 անձ:


Գծապատկեր 1. հարցվողների բաշխումն ըստ սեռի

հարցվողների տարիքային բաշխմանը նայելիս տեսնում ենք (տես Գծապատկեր 2), որ



հարցվողների ամենամեծ խումբը *28-ից 37 տարեկաններն* են հարցվողների 21.40%-ը կամ 214 անձ, հաջորդ մեծ խումբը *38-ից 48 տարեկանները* 18.60% կամ 186 անձ, այնուհետև *18-ից 27 տարեկանները* 16.40% կամ 164 անձ:

Գծապատկեր 2. հարցվողների բաշխումն ըստ տարիքային խմբի



Այժմ ներկայացնենք հարցվողների բաշխումն ըստ ռադիո լսելու հանգամանքի:

Գծապատկեր 3-ից տեսնում ենք, որ հարցվողների մեծամասնությունը 58.90%-ը կամ 589 անձ պատասխանել է, որ *չունի* ռադիո:

Գծապատկեր 3.




Այժմ ուսումնասիրենք Հանրային ռադիոյի լսարանի սոցիալ-ժողովրդագրական պատկերը (այսուհետ հաշվարկները կատարվել են «Հանրային ռադիո» լսող հարցվողների շրջանում ռադիո լսող ընդհանուր հարցվողների 55.01%-ի մեջ կամ 324 անձանց շրջանում):

Հարցումը ցույց է տվել, որ հանրային ռադիոյի լսարանի մեծամասնությունը 53.70% կամ 174 անձ, տղամարդիկ են, իսկ կանայք կազմում են 46.30%-ը կամ 150 անձ:

Ինչ վերաբերում է հանրային ռադիոյի լսարանի տարիքային կազմին (տես Գծապատկեր 7), ապա մեծ է 28-ից 37 տարեկանների խումբը 28.40%-ը կամ 92 անձ, այնուհետև 18-ից 27 և 59-ից 69 տարեկանների խմբերը համապատասխանաբար 18.83% կամ 61 անձ և 38-ից 48 տարեկաններինը 14.81% կամ 48 անձ


Գծապատկեր 7. Հանրային ռադիոյի լսարանի տարիքային բաշխվածությունը



Հանրային ռադիոյի լսարանի մեծամասնությունը ներկայումս աշխատում է 59.88%-ը կամ 194 անձ, իսկ 40.12%-ը կամ 130 անձ չի աշխատում/երբեք չի աշխատել. Ներկայումս աշխատող հարցվողների մեծամասնությունը հանդիսանում է վարձու աշխատող 88.66% կամ 172 անձ, իսկ 11.34%-ը կամ 22 անձ հանդիսանում է գործատու՝


Այժմ անդրադառնանք հանրային ռադիոյի լսարանի ներկայումս աշխատող հարցվողների զբաղվածության ոլորտները: Գծապատկեր 8-ից երեւում է, որ մեծամասնությունն աշխատում է այլ ծառայություններ ոլորտում 28.87% կամ 56 անձ, իր մեծությամբ հաջորդ խմբի ներկայացուցիչներն աշխատում են առևտրի ոլորտում 25.77% կամ 50 անձ, մյուսը արտադրություն ոլորտում 14.43% կամ 28 անձ:

Գծապատկեր 8. Հանրային ռադիոյի լսարանի զբաղվածության ոլորտները




Անդրադառնանք նաև աշխատող հարցվողների զբաղեցրած պաշտոններին: Ինչպես տեսնում ենք Գծապատկեր 9-ից, համեմատաբար մեծ խումբ են կազմում *վաճառողները* 12.37% կամ 24 անձ, *ծառայողները* 7.73% կամ 15 անձ, *վարորդները* 7.22% կամ 14 անձ, *բանվորները* 6.70% կամ 13 անձ:

Գծապատկեր 9. Հանրային ուղիով լսարանի զբաղեցրած պաշտոնները



Հանրային ռադիո ունկնդրող հարցվողների կրթական մակարդակն ուսումնասիրելիս Գծապատկեր 10-ից տեսնում ենք, որ համեմատաբար մեծ է *բարձրագույն կրթություն* ունեցողների թիվը 37.35% կամ 121 անձ:


Գծապատկեր 10. Հանրային ռադիոյի լսարանի կրթական մակարդակը



Գծապատկեր 11-ից տեսնում ենք, որ հարցվողների մեծամասնությունը 80.77% կամ 315 անձ հանրային ռադիո ունկնդրելու համար օգտագործում է ազդակի ստացման տեխնիկական *FM* եղանակը: Գծապատկերից կարող ենք նկատել, որ այս հարցվողների մեծ մասը ունկնդրման եղանակների և մինչև 50% համամասնության դեպքում, և 51%-ից ավելիի դեպքում համապատասխանաբար 10.51%-ը կամ 41 անձ և 70.26%-ը կամ 274 անձ, օգտագործում են *FM* տարբերակը:

Իրենց հերթին միայն մեկ եղանակ օգտագործողների դեպքում (266 անձ) մեծ է *FM* տարբերակն օգտագործողների թիվը 96.62% կամ 257 անձ, *AM* տարբերակն օգտագործողների թիվը կազմել է 2.63% կամ յոթ անձ, իսկ *համացանց* օգտագործողների թիվը 0.75% կամ երկու անձ:


Գծապատկեր 11. Հանրային ռադիոյի ազդակի ստացման տեխնիկական եղանակները



հարցվողների մեծամասնությունը 43.08% կամ 187 անձ հանրային ռադիո ունկնդրում է *մեքենայում*։ Գծապատկեր 12-ից տեսնում ենք, որ այս հարցվողների մեծ մասը ռադիոյի ունկնդրման և մինչև 50% համամասնության դեպքում, և 51%-ից ավելիի դեպքում համապատասխանաբար 13.59%-ը կամ 59 անձ և 29.49%-ը կամ 128 անձ ունկնդրում են *մեքենայում*։


Իրենց հերթին միայն մեկ վայրում ունկնդրողների դեպքում (231 անձ) մեծ է *մեքենայում* ռադիո ունկնդրողների թիվը 45.89% կամ 106 անձ, իսկ *աշխատատեղում*, *բնակարանում* և *տրանսպորտում* ռադիո ունկնդիրների թիվը համապատասխանաբար կազմել է 29.00% կամ 67 անձ, 23.38% կամ 54 անձ, 1.73% կամ չորս անձ։

Գծապատկեր 12. Հանրային ռադիո ունկնդրման վայրը




Հանրային ռադիոյի լսարանի համար ունկնդրման հաճախականությունը մեծամասնության դեպքում եղել է օրական երեք կամ չորս անգամ՝ 33.95% կամ 110 անձ(տես գծապատկեր 13), իսկ ունկնդրման սեանսների տևողությունը մեծամասնության դեպքում եղել է 21-40 րոպե՝ 25.00% կամ 81 անձ(տես Գծապատկեր 14)։

Գծապատկեր 13. «Հանրային ռադիո» ունկնդրման հաճախականությունը



- Շաբաթական մեկ կամ երկու անգամ
- Օրական մեկ անգամ
- Օրական երեք կամ չորս անգամ
- Ավելի քան օրական չորս անգամ

Գծապատկեր 14. «Հանրային ռադիո» ունկնդրման սեանսի տևողությունը



- Մինչև 10 րոպե
- 11-20 րոպե
- 21-40 րոպե
- 41-60 րոպե
- 60 րոպեից ավելի

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ հանրային ռադիոյի մեկ օրվա ունկնդիրների թիվը կազմում է 81.17% կամ 263 անձ (ընդհանուր ռադիոլսողների 44.65%-ը):

Աղյուսակ 3-ում ներկայացված է հանրային ռադիոյի հաղորդումների ունկնդրման բաշխումը: Ընդհանուր առմամբ, հարցին պատասխանել է 324 հարցվող, տրվել է 664 պատասխան: Ըստ նշված հարցվածներից 271-ի ամենից շատ ունկնդրելիություն ունի «Տաղիտուր»-¹: 56.09% կամ 152 անձ: Մնացած 53 անձինք նշել են միայն «երաժշտական» նկարագրական պատասխանը, քանի որ չեն իմացել հաղորդման անվանումը: Ընդհանուր առմամբ, «երաժշտական» նկարագրական պատասխանը նշվել է ամբողջ պատասխանների մեջ 34.88%-ի դեպքում կամ 113 անգամ: Բացասական վարկանիշը հաշվարկվել է ըստ 91 հարցվողի պատասխանների: «Հանրային ռադիո» ունկնդրողների 28.09%-ը կամ 91 անձ նշել է, թե որ հաղորդումն է իր կարծիքով ամենավատը: Հարցվողների համեմատաբար մեծ մասը «ամենավատն» է որակել *Խելք խելքի* հաղորդումը 14.29% կամ 13 անձ:

Թիվը՝ ըստ բնակչության (Երևան քաղաքում 838,361 մարդ), հաշվարկվել է ելեերով այն համամասնությունից, որն ունի տվյալ հաղորդման ունկնդրելիությունը 1000 մարդու հաշվարկով:

Աղյուսակ 3. հաղորդումների ունկնդրելիությունը

Հ/Հ	հաղորդում	Ունկնդրելիություն	Դրական վարկանիշ (ԴՎ) (%)	Բացասական վարկանիշ (ԲՎ)		ԹԻՎԸ բնակչության մեծ	
				Քանակ	(%)	(ԴՎ)	(-ԲՎ)
1	«Ռադիոլուր»	152	56.09%	0	0.00%	127,431	0
2	«Երաժշտական առավոտ»	41	15.13%	0	0.00%	34,373	0
3	«Երևանն է խոսում»	29	10.70%	0	0.00%	24,312	0
4	«Ստատուս քվո»	26	9.59%	5	5.49%	21,797	4,192
5	«Մ-ԶՈՆ»	20	7.38%	1	1.10%	16,767	838
6	«Երաժշ. ծր Ձեր ցանկությամբ»	20	7.38%	0	0.00%	16,767	0
7	«Քաղաքական շաբաթօրյակ»	17	6.27%	2	2.20%	14,252	1,677
8	«Ես առողջ եմ»	16	5.90%	0	0.00%	13,414	0
9	«Երաժշ. եռանկյունի»	15	5.54%	0	0.00%	12,575	0
10	«Առավոտը հանրայինում»	15	5.54%	0	0.00%	12,575	0
11	«Ռադիոթատրոն»	14	5.17%	0	0.00%	11,737	0
12	«Հայկական հարց»	13	4.80%	4	4.40%	10,899	3,353
13	«Կարևոր է իմանալ»	12	4.43%	0	0.00%	10,060	0
14	«Վերնատուն»	10	3.69%	6	6.59%	8,384	5,030
15	«Երգ երգոց»	10	3.69%	2	2.20%	8,384	1,677
16	«Բիզնես բանաձև»	9	3.32%	0	0.00%	7,545	0
17	«Հատվող եթեր»	9	3.32%	2	2.20%	7,545	1,677
18	«Ռետրո ակումբ»	9	3.32%	0	0.00%	7,545	0
19	«Մոր և մանկան անկյուն»	9	3.32%	0	0.00%	7,545	0
20	«Կամուրջ»	8	2.95%	10	10.99%	6,707	8,384
21	«Ձեր փաստաբանը»	8	2.95%	0	0.00%	6,707	0
22	«Արմատներ»	8	2.95%	0	0.00%	6,707	0
23	«Դասական երաժողությունը և մենք»	8	2.95%	1	1.10%	6,707	838

Հ/Հ	հաղորդում	Ունեկտրե- լիություն	Դրական վարկանիշ (ԴՎ) (%)	Բացասական վարկանիշ (ԲՎ)		Թիվը բնակչության մեջ	
				Քանակ	(%)	(ԴՎ)	(-ԲՎ)
24	«Քո ձայնը»	6	2.21%	2	2.20%	5,030	1,677
25	«Սպրեյու բանաձև»	6	2.21%	1	1.10%	5,030	838
26	«15 րոպեն քիչ է»	6	2.21%	1	1.10%	5,030	838
27	«Խելք ինքիքի»	6	2.21%	13	14.29%	5,030	10,899
28	«Խոստենք հայերեն»	5	1.85%	0	0.00%	4,192	0
29	«Պոեզիա»	5	1.85%	9	9.89%	4,192	7,545
30	«Մենք և մեր բառերը»	4	1.48%	1	1.10%	3,353	838
31	«Հավատի ճամփով»	4	1.48%	1	1.10%	3,353	838
32	«Մեր ձայնադարանի ֆոնդից»	4	1.48%	0	0.00%	3,353	0
33	«Իմ երգը»	4	1.48%	0	0.00%	3,353	0
34	«Համասփյուռք»	3	1.11%	4	4.40%	2,515	3,353
35	«Արևմտահայերեն հաղորդումներ»	3	1.11%	1	1.10%	2,515	838
36	«Էկոսֆերա»	2	0.74%	1	1.10%	1,677	838
37	«Հայաստանը մեր տունն է»	2	0.74%	1	1.10%	1,677	838
38	«Դպրություն»	2	0.74%	0	0.00%	1,677	0
39	«Ռադիո 02»	2	0.74%	0	0.00%	1,677	0
40	«Ճանաչիր ինձ»	1	0.37%	0	0.00%	838	0
41	«Ստարտափ Հայաստան»	1	0.37%	0	0.00%	838	0
42	«Մատենադարան»	1	0.37%	0	0.00%	838	0
43	«Ազնիվ խաղեր»	1	0.37%	2	2.20%	838	1,677
44	«Բլից արտ»	1	0.37%	1	1.10%	838	838
45	«Բարձր գրականություն»	1	0.37%	0	0.00%	838	0
46	«Հայ-թեք»	1	0.37%	1	1.10%	838	838
47	«Պստիկաշեն»	1	0.37%	1	1.10%	838	838
48	«3 ու 4»	1	0.37%	0	0.00%	838	0
49	«Կամուրջ սփյուռքի ձայնը»	0	0.00%	0	0.00%	0	0
50	«Գիրք ճանապարհի»	0	0.00%	3	3.30%	0	2,515
51	«Գերդաստաններ»	0	0.00%	1	1.10%	0	838
52	«Երկու սերունդ»	0	0.00%	2	2.20%	0	1,677
53	«Ավետիս»	0	0.00%	1	1.10%	0	838
54	«Շողակն Արարատյան»	0	0.00%	10	10.99%	0	8,384
55	«Ասպար»	0	0.00%	0	0.00%	0	0
56	«Մանասա /հոգևոր»	0	0.00%	1	1.10%	0	838
57	«Զարդուցիչ»	0	0.00%	0	0.00%	0	0
Ընդամենը		551		91		838.361²	76,287

Աղյուսակ 4-ում ներկայացված է հարցվողների կողմից նշված հանրային ռադիոյի հաղորդումների հեղինակների, հաղորդավարների ու լրագրողների բաշխումը: Հարկ է նշել,

² Երևան քաղաքի 18 տարեկանից բարձր բնակչության թիվը:

որ հարցին պատասխանել է 222 անձ, տրվել է 546 պատասխան: Վերլուծությունից պարզ է դարձել, որ ճանաչելիության առավել բարձր վարկանիշ ունի Լուսինե Մուրադյանը 29.73% կամ 66 անձ:

Թիվը՝ ըստ բնակչության (Երևան քաղաքում 838,361 մարդ), հաշվարկվել է ելեերով այն համամասնությունից, որն ունի տվյալ հաղորդման ունկեղրելիությունը 1000 մարդու հաշվարկով:

Աղյուսակ 4. հաղորդումների հեղինակների, հաղորդավարների, լրագրողների ճանաչելիությունը

Հ/Հ	Անուն Ազգանուն	հեղինակ, հաղորդավար		
		Քանակ	Վարկանիշ	Թիվը բնակչության մեջ
1	Լուսինե Մուրադյան	66	29.73%	55,332
2	Լիլիթ Աղբալյան	61	27.48%	51,140
3	Սարգիս Նաջարյան	37	16.67%	31,019
4	Գևորգ Մելիքյան	30	13.51%	25,151
5	Տիգրան Հարությունյան	25	11.26%	20,959
6	Մարիա Բարեղամյան	23	10.36%	19,282
7	Ալիսա Քալանթարյան	21	9.46%	17,606
8	Լուսինե Նազարյան	20	9.01%	16,767
9	Վահան Արծրունի	19	8.56%	15,929
10	Լյուսի Քոչարյան	18	8.11%	15,090
11	Աննա Հեքեքյան	16	7.21%	13,414
12	Պետրոս Ղազարյան	14	6.31%	11,737
13	Ավետ Բարսեղյան	14	6.31%	11,737
14	Նանա Թադևոսյան	13	5.86%	10,899
15	Մարիամ Հովսեփյան	12	5.41%	10,060
16	Նաիրա Հայրապետյան	11	4.95%	9,222
17	Բարեղամ Ղուկասյան	10	4.50%	8,384
18	Աստղիկ Փիլիպոսյան	10	4.50%	8,384
19	Նաիրա Աղաբեկյան	9	4.05%	7,545
20	Նազելի Օհանյան	9	4.05%	7,545
21	Անահիտ Բեկյան	9	4.05%	7,545
22	Կարեն Քոչարյան	7	3.15%	5,869
23	Նարինե Սողոմոնյան	7	3.15%	5,869
24	Գոհար Մարտիկյան	7	3.15%	5,869
25	Համլետ Առաքելյան	7	3.15%	5,869
26	Ստեփան Զաքարյան	6	2.70%	5,030
27	Ռուբեն Մաթևոսյան	6	2.70%	5,030
28	Լևոն Գալստյան	5	2.25%	4,192
29	Արուսյակ Ղազարյան	5	2.25%	4,192
30	Միլվա Յուզբաշյան	5	2.25%	4,192
31	Իզաբելլա Գրիգորյան	4	1.80%	3,353
32	Վարդգես Ավետիսյան	4	1.80%	3,353

Հ/Հ	Անուն Ազգանուն	Քանակ	հեղինակ, հաղորդավար վարկանիշ	Թիվը բնակչության մեջ
33	Շաքե Մանգասարյան	3	1.35%	2,515
34	Նունե Ավետիսյան	3	1.35%	2,515
35	Անահիտ Հովհաննիսյան	3	1.35%	2,515
36	Աննա Սահակյան	3	1.35%	2,515
37	Մայրանուշ Գրիգորյան	3	1.35%	2,515
38	Նարինե Իսրայելյան	3	1.35%	2,515
39	Խորեն Լևոնյան	3	1.35%	2,515
40	Միեր Հովհաննիսյան	2	0.90%	1,677
41	Կուշանե Չոբանյան	2	0.90%	1,677
42	Մարտին Վարդազարյան	2	0.90%	1,677
43	Վեգա Ասրիսյան	2	0.90%	1,677
44	Մարիամ Ղարոյան	1	0.45%	838
45	Օլգա Առաքելյան	1	0.45%	838
46	Հերմինե Կարապետյան	1	0.45%	838
47	Արքմենիկ Նիկողոսյան	1	0.45%	838
48	Ժիրայր Ոսկանյան	1	0.45%	838
49	Սյուզի Թոսունյան	1	0.45%	838
50	Հասմիկ Դիլանյան	1	0.45%	838
Ընդամենը		546		838,361³

հարցվողները նշել են նաև, թե ինչ բնույթի հաղորդումներ կցանկանան ունենդրել հանրային ուղիով եթերից: Հարցին տրվել է 704 պատասխան: Մասնավորապես մեծ է *երաժշտական* 32.53% կամ 229 անձ, ու *լրատվական* 28.69% կամ 202 անձ, բնույթի հաղորդումներ ցանկացողների թիվը:

Գծապատկեր 15. Ցանկալի հաղորդումների բնույթն ըստ հարցվողների



³ Երևան քաղաքի 18 տարեկանից բարձր բնակչության թիվը:

Որպես այլ տարբերակներ նշվել են *հանրամատչելի, սոցիալական, պատմաբանական, առողջապահական* տարբերակները, որոնցից մեծամասնություն է կազմում *հանրամատչելի* տարբերակը 50.00% կամ չորս անձ:


Հարցման վերջում յուրաքանչյուր հարցազրուցավար իր կարծիքով գնահատել է հարցվողի օբյեկտիվությունը, մասնավորապես հարցվողների մեծամասնությունը 96.60%-ը կամ 966 անձ գնահատվել է *օբյեկտիվ*, 2.70%-ը կամ 27 անձ *ոչ այնքան օբյեկտիվ*, 0.20%-ը կամ երկու անձ *ոչ օբյեկտիվ*, իսկ 0.50%-ի համար հարցազրուցավարները *դժվարացել են գնահատական* տալ:

2.2. ՀԲ-ով ընդգրկված մարզերի չափահաս բնակիչներ /բացառությամբ Արմավիրի, Արարատի, Կոտայքի և Արագածոտնի մարզերը/ շրջանում իրականացված սոցիոլոգիական հարցման վերլուծություն

Նախ ներկայացնենք հարցաթերթի ընտրանքային մասի բաշխվածությունը:

Այսպես, Գծապատկեր 16-ից տեսնում ենք, որ հարցվողների մեծամասնությունը 54.30%-ը կամ 543 անձ, եղել են *կանայք*, իսկ *տղամարդիկ* 45.70%-ը կամ 457 անձ:

Գծապատկեր 16. հարցվողների բաշխումն ըստ սեռի



Գծապատկեր 17-ում հարցվողների տարիքային բաշխմանը նայելիս տեսնում ենք, որ հարցվողների ամենամեծ խումբը *28-ից 37 տարեկաններն* են հարցվողների 23.50%-ը կամ 235 անձ, այնուհետև *49-ից 58 տարեկանները* 17.80% կամ 178 անձ, *18-ից 27տարեկանները* 16.90% կամ 169 անձ, և *38-ից 48 տարեկանները* 16.60% կամ 166 անձ:




Գծապատկեր 17. հարցվողների բաշխումն ըստ տարիքային խմբի

- H 18-ից 27 տարեկան
- H 28-ից 37 տարեկան
- Y 38-ից 48 տարեկան
- H 49-ից 58 տարեկան
- B 59-ից 69 տարեկան

B 70-ից 79 տարեկան Y 80 տարեկան և բարձր

Ըստ մարզերի հարցվողների բաշխվածությանը նայելիս (տես Գծապատկեր 18) տեսնում ենք, որ առավել մեծ է *Շիրակի* 23.40% կամ 234 անձ, *Գեղարքունիքի* 22.90% կամ 229 անձ, և *Լոռու* 21.60% կամ 216 անձ, մարզերի բնակչության ընդգրկվածությունը: Իսկ ինչ վերաբերում է հարցվողների բնակչության տիպին, ապա հարցվողների 50.60%-ը կամ 506 անձ եղել է *քաղաքային* համայնքներից, իսկ 49.40%-ը կամ 494 անձ *գյուղական*

Գծապատկեր 18. հարցվողների բաշխումն ըստ մարզերի




Այժմ ուսումնասիրենք Հանրային ռադիոյի լսարանի սոցիալ-ժողովրդագրական պատկերը (այսուհետ հաշվարկները կատարվել են «Հանրային ռադիո» լսող հարցվողների շրջանում ռադիո լսող ընդհանուր հարցվողների 79.74%-ի մեջ կամ 492 անձանց շրջանում):

հարցումը ցույց է տվել, որ հանրային ռադիոյի լսարանի մեծամասնությունը 54.27% կամ 267 անձ, տղամարդիկ են, իսկ կանայք կազմում են 45.73%-ը կամ 225 անձ:

Ինչ վերաբերում է Հանրային ռադիոյի լսարանի տարիքային կազմին (տես Գծապատկեր 23), ապա մեծ է 28-ից 37 տարեկանների խումբը 27.44%-ը կամ 135 անձ, այնուհետև 18-ից 27 տարեկանների խումբը 20.53% կամ 101 անձ, 38-ից 48 տարեկաններինը 18.90% կամ 93 անձ, և 49-ից 58 տարեկաններինը 15.65% կամ 77 անձ:

Գծապատկեր 23. Հանրային ռադիոյի լսարանի տարիքային բաշխվածությունը




- B 18-ից 27 տարեկան
- B 28-ից 37 տարեկան
- B 38-ից 48 տարեկան
- B 49-ից 58 տարեկան
- B 59-ից 69 տարեկան
- B 70-ից 79 տարեկան
- 80 տարեկան և բարձր

Հանրային ռադիոյի լսարանի մեծամասնությունը *ներկայումս աշխատում է* 52.03%-ը կամ 256 անձ, իսկ 47.97%-ը կամ 236 անձ *չի աշխատում/երբեք չի աշխատել*։ Ներկայումս աշխատող հարցվողների մեծամասնությունը հանդիսանում է *վարձու աշխատող* 83.98% կամ 215 անձ, իսկ 16.02%-ը կամ 41 անձ հանդիսանում է *գործատու*։


Այժմ անդրադառնանք Հանրային ռադիոյի լսարանի ներկայումս աշխատող հարցվողների զբաղվածության ոլորտներին: Գծապատկեր 24-ից երևում է, որ մեծամասնությունն աշխատում է *այլ ծառայություններ* ոլորտում 26.56% կամ 68 անձ, իր մեծությամբ հաջորդ խմբի ներկայացուցիչներն աշխատում են *առևտրի* ոլորտում 15.63% կամ 40 անձ, մյուսը *պետական ծառայություն* ոլորտում 10.55% կամ 27 անձ:

Գծապատկեր 24. Հանրային ռադիոյի լսարանի զբաղվածության ոլորտները



Անդրադառնանք նաև աշխատող հարցվողների զբաղեցրած պաշտոններին: Ինչպես տեսնում ենք Գծապատկեր 25-ից, համեմատաբար մեծ խումբ են կազմում *մանկավարժները* 9.38% կամ 24 անձ, *վաճառողները* 9.38% կամ 24 անձ, *բանկորները* 8.20% կամ 21 անձ, *մասնագետները* 7.42% կամ 19 անձ, *անհատ ձեռնարկատերերը* 6.64% կամ 17 անձ, *վարորդները* 6.64% կամ 17 անձ:

Գծապատկեր 25. Հանրային ռադիոյի լսարանի զբաղեցրած պաշտոնները



Հանրային ռադիո ունկնդրող հարցվողների կրթական մակարդակն ուսումնասիրելիս Գծապատկեր 26-ից տեսնում ենք, որ համեմատաբար մեծ է *բարձրագույն կրթություն* ունեցողների թիվը 36.18% կամ 178 անձ:

Գծապատկեր 26. Հանրային ռադիոյի լսարանի կրթական մակարդակը



H Բարձրագույն կամ հետբուհական

U Միջին մասնագիտական


U Նախնական մասնագիտական

H Առանց մասնագիտական կրթության (դպրոցական կրթություն)

Գծապատկեր 27-ից տեսնում ենք, որ հարցվողների մեծամասնությունը 71.02% կամ 468 անձ հանրային ռադիո ունկնդրելու համար օգտագործում է ազդակի ստացման տեխնիկական *FM* եղանակը: Գծապատկերից կարող ենք նկատել, որ այս հարցվողների մեծ մասը ունկնդրման եղանակների և մինչև 50% համամասնության դեպքում, և 51%-ից ավելիի դեպքում համապատասխանաբար 15.48%-ը կամ 102 անձ և 55.54%-ը կամ 366 անձ, օգտագործում են 771/տարբերակը:

Իրենց հերթին միայն մեկ եղանակ օգտագործողների դեպքում (321 անձ) մեծ է *FM* տարբերակն օգտագործողների թիվը 93.15% կամ 299 անձ, իսկ *AM* տարբերակն օգտագործողների թիվը կազմել է 6.85% կամ 22 անձ:

Գծապատկեր 27. Հանրային ռադիոյի ազդակի ստացման տեխնիկական եղանակները




B Մինչև 50%
8 51%ից ավելի

հարցվողների մեծամասնությունը 48.65% կամ 360 անձ հանրային ռադիո ունկնդրում է *մեքենայով*. Գծապատկեր 28-ից տեսնում են, որ այս հարցվողների մեծ մասը ռադիոյի ունկնդրման և մինչև 50% համամասնության դեպքում, և 51%-ից ավելիի դեպքում

համապատասխանաբար 18.24%-ը կամ 135 անձ և 30.41%-ը կամ 225 անձ ունկնդրում են *մեքենայում*:

Իրենց հերթին միայն մեկ վայրում ունկնդրողների դեպքում (262 անձ) մեծ է *մեքենայում* ռադիո ունկնդրողների թիվը 59.93% կամ 157 անձ, իսկ *աշխատատեղում*, *բնակարանում* և *տրանսպորտում* ռադիո ունկնդիրների թիվը համապատասխանաբար կազմել է 9.54% կամ 25 անձ, 27.48% կամ 72 անձ, 3.05% կամ 8 անձ:


Գծապատկեր 28. Հանրային ռադիոյի ունկնդրման վայրը



Հանրային ռադիոյի լսարանի համար ունկնդրման հաճախականությունը մեծամասնության դեպքում եղել է *օրական մեկ անգամ* 55.69% կամ 74 անձ (տես Գծապատկեր 29), իսկ ունկնդրման սեանսների տևողություններն իրարից էականորեն չեն տարբերվում, սակայն առավելապես մեծ է *11-20 րոպե* նշածների թիվը՝ 24.39% կամ 120 անձ (տես Գծապատկեր 30):

Գծապատկեր 29. «Հանրային ռադիո» ունկնդրման հաճախականությունը

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ հանրային ռադիոյի մեկ օրվա ունկնդիրների թիվը կազմում է 88.21% կամ 434 անձ (ընդհանուր ռադիոլսողների 70.34%-ը):



1. Շաբաթական մեկ կամ երկու անգամ
2. Օրական մեկ անգամ
3. Օրական երեք կամ չորս անգամ
4. Ավելի քան օրական չորս անգամ

Գծապատկեր 30. «Հանրային ռադիո» ունկնդրման սեանսի տևողությունը



- Մինչև 10 րոպե
- 11-20 րոպե
- 21-40 րոպե
- 41-60 րոպե
- 60 րոպեից ավելի

Աղյուսակ 5-ում ներկայացված է Հանրային ռադիոյի հաղորդումների ունկնդրման բաշխումը: Ընդհանուր առմամբ, հարցին պատասխանել է 478 հարցվող, տրվել է 933 պատասխան: Նշված հաղորդումներից ամենից շատ ունկնդրելիություն ունի «Ռադիոլուր»ը 52.72% կամ 252 անձ, իսկ մնացած պատասխանների դեպքում 270 անձ, նշել է «Երաժշտական» նկարագրական պատասխանը, բանի որ հարցվողը չի իմացել հաղորդման անվանումը:

Հանրային ռադիոյի ունկնդրողների 4.06%-ը /կամ 20 անձ/ նշել է, թե որ հաղորդումն է իր կարծիքով ամենավատը: Հարցվողներն «ամենավատն» են որակել *Արևմտահայերեն հաղորդումները* 15.00% կամ երեք անձ:

Թիվը՝ ըստ բնակչության (ուսումնասիրված մարզերում 742,942 մարդ), հաշվարկվել է ելներով այն համամասնությունից, որն ունի տվյալ հաղորդման ունկնդրելիությունը 1000 մարդու հաշվարկով:

Աղյուսակ 5. Հաղորդումների ունկնդրելիությունը

Հ/Հ	հաղորդում	Ունկնդրելիություն	Դրական վարկանիշ (ԴՎ)		Բացասական վարկանիշ (ԲՎ)		Թիվը բնակչության մեջ (մարդ)	
			(%)	Քանակ	(%)	Քանակ	(ԴՎ)	(ԲՎ)
1	«Ռադիոլուր»	252	52.72%		0.00%	188,985	0	
2	«Երաժշտական առավոտ»	56	11.72%		0.00%	41,997	0	
3	«Ստատուս քվո»	38	7.95%	2	10.00%	28,498	1,486	
4	«Բիզնես բանաձև»	19	3.97%	1	5.00%	14,249	743	
5	«Հատվող եթեր»	19	3.97%		0.00%	14,249	0	
6	«Քո ձայնը»	19	3.97%		0.00%	14,249	0	
7	«Մեր ձայնադարանի ֆոնդից»	17	3.56%		0.00%	12,749	0	
8	«Կարևոր է իմանալ»	14	2.93%		0.00%	10,499	0	
9	Երաժշ. ծր. «Ձեր ցանկությամբ»	13	2.72%		0.00%	9,749	0	
10	«Քաղաքական շարաթորյակ»	12	2.51%		0.00%	8,999	0	
11	«Դասական երաժշտությունը և մենք»	11	2.30%	2	10.00%	8,249	1,486	
12	«Ռետրո ակումբ»	11	2.30%		0.00%	8,249	0	
13	«Հայկական հարց»	10	2.09%		0.00%	7,499	0	
14	«Իմ երգը»	10	2.09%		0.00%	7,499	0	
15	«Ես առողջ եմ»	9	1.88%		0.00%	6,749	0	
16	«Առավոտը հանրայինում»	9	1.88%		0.00%	6,749	0	
17	«Դպրություն»	8	1.67%		0.00%	6,000	0	
18	«Ռադիոթատրոն»	8	1.67%		0.00%	6,000	0	
19	«Ապրելու բանաձև»	7	1.46%		0.00%	5,250	0	
20	«Պոեզիա»	7	1.46%		0.00%	5,250	0	
21	«Համասփյուռք»	6	1.26%		0.00%	4,500	0	
22	«Կամուրջ»	6	1.26%		0.00%	4,500	0	
23	«Ճանաչիր ինձ»	6	1.26%		0.00%	4,500	0	
24	«Ձեր փաստաբանը»	6	1.26%		0.00%	4,500	0	

Հ/Հ	Հաղորդում	Ունկնդրե լիություն	Դրական		Բացասական		Թիվը	
			վարկանիշ (ԴՎ) (%)	Քանակ	վարկանիշ (ԲԿ) (%)	քանակ	բնակչության մեջ (մարդ) (ԴՎ)	(ԲՎ)
25	«Ստարտափ Հայաստան»	6	1.26%		0.00%	4,500	0	
26	«Խոսենք հայերեն»	6	1.26%		0.00%	4,500	0	
27	«Վերևատուն»	6	1.26%		0.00%	4,500	0	
28	«Երևանն է խոսում»	6	1.26%		0.00%	4,500	0	
29	«Մոր և մանկան անկյուն»	6	1.26%		0.00%	4,500	0	
30	«Մ ԶՈՆ»	5	1.05%		0.00%	3,750	0	
31	«Երկու սերունդ»	5	1.05%	1	5.00%	3,750	743	
32	«Կամուրջ սփյուռքի ձայնը»	4	0.84%	1	5.00%	3,000	743	
33	«Բարձր գրականություն»	4	0.84%		0.00%	3,000	0	
34	«Ասպար»	4	0.84%		0.00%	3,000	0	
35	«Մատենադարան»	3	0.63%		0.00%	2,250	0	
36	«Հավատի ճամփով»	3	0.63%	1	5.00%	2,250	743	
37	«Երաժշտական եռանկյունի»	3	0.63%		0.00%	2,250	0	
38	«Երգ երգոց» /ուղիղ/Հ1	3	0.63%		0.00%	2,250	0	
39	«Խելք խելքի»	3	0.63%	1	5.00%	2,250	743	
40	«Գիրք ճանապարհի»	3	0.63%		0.00%	2,250	0	
41	«Արհմտահայերեն հաղորդումներ»	2	0.42%	3	15.00%	1,500	2,229	
42	«Էկոսֆերա»	2	0.42%	1	5.00%	1,500	743	
